ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 16 - Լ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից ընտանիքում բռնության դեպքերի արձագանքման և բռնության ենթարկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի, մարզային վարչությունների և դրանց ենթակա տարածքային բաժինների պետերին՝

1) հանցագործությունների և պատահարների մասին հաղորդում, տեղեկություն ստանալու դեպքում, եթե դրանք պարունակում են ընտանիքում բռնության հատկանիշներ դեպքի վայր մեկնող օպերատիվ խմբում ներգրավել ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի /խմբի/ ծառայողին /ծառայողներին/,

2) ապահովել ընտանիքում բռնության ենթարկվածի հետ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի /խմբի/ ծառայողի կողմից <<Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին>> ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը վերապահված գործառույթների իրականացումը,

3) ապահովել ոստիկանության ստորաբաժանում հրավիրված ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքների իրականացումը առանձնացված սենյակում:

2. Հրամանի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Սարգսյանին:

3. Հրամանը հայտարարել Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ. ՕՍԻՊՅԱՆ**

<<17>>_07_2019թ.

ք.Երևան